

Հեղինակ՝ Ն. Թուխիկյան-Խաչատուրյան
Խմբագիր՝ Սուսաննա Աղամյան
Նկարազարդումը՝ Նարինե Մանուչարյանի
Համակարգչային ձևավորումը՝ Հելլեն Երեմյանի
Մանե Խաչատրյանի

**Զվարճալի գրոսանքը կայացավ Հովհ. Թումանյանի եղբոր՝ Վահանի ծոռան՝
Կարեն Վարդանյանի ընտանիքի և նրա կողմից հիմնադրված
«Արմենիան հելիքոփերս» ՍՊԸ ավիաընկերության հովանավորությամբ:**

Թուխիկյան-Խաչատուրյան Ն.
Զվարճալի զգացքը գրոսանք/ Ն. Թուխիկյան-Խաչատուրյան.-Եր.:
«Հովհ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ, 2018.- 84 էջ:

Մուսանեն և Մուսակնը երեխաներին կօգնեն հետաքրքիր ճամփորդություն կատարել Հովհ. Թումանյանի թանգարանում, ծանոթանալ հոչակավոր մարդու մանկական զվարճալի պատմություններին և ընդհանրապես ծանոթանալ թանգարանային վարքականությնին:

Գրքույկ-տետրակը նաև հնարավորություն է տալիս երեխային ստուգել աշխարհաճանաչողական իր գիտելիքները:



- Բարս, մենք Հովհաննես Թումանյանի
թանգարանի Սուսաներս ենք:
Աշխարհի գրեթե բոլոր լեզուներով
թանգարանները մեր անունով կոչվում են
Մուսաների բնակավայր, տաճար՝ Սյուլգեռում:
Իրականում, եթե զաս թանգարան մեզ չես
տեսնի, բայց կզգաս, որ մենք այնտեղ ենք:

Իմ անունը Սուսակն է ,



իսկ ընկերոջս անունը՝ Սուսան:

Յիմա մենք քեզ կուղեկցենք թանգարանով
Եւ հետաքրքիր պատմություններ կպատմենք
Թումանյանի մասին: Միայն մի քանի կարեւոր
կանոններ, որ պետք է իմանալ եւ պահպանել
թանգարաններ մտնելիս.





ա/ Տղաները պետք է անպայման հանեն գլխարկները:



բ/ Աշխատիր շատ հարցեր տալ թանգարանի աշխատակիցներին, չէ՞ որ դու հետաքրքրասեր ես եկել ես թանգարան նոր բան իմանալու:



դ/ Անջատիր բջջային հեռախոսդ:



Ե/ Զգուշ եղիր ցուցանմուշների մոտ, ձեռք մի տուր, եթե հասուն թույլտվություն չկա: Եթե ուսապարկով ես, ուշադիր եղիր, որ ոչնչի չոփաքչես եւ չկոտրես:



զ/ Թանգարանում մաստակ չեն ծամում: Դիր այն անձեռոցիկի մեջ եւ նետիր մոտակա աղբամանը, եթե մոտակայքում չկա, ապա դիր գրպանդ կամ պայուսակիդ մեջ:

-իսկ իիմա ստուգիր, թէ ինչ գիտես Յովիաննես
Թումանյանի մասին: Նշիր այն կետերը, որոնք ըստ
քեզ ճիշտ են:

Խնդրում եմ գործն անես ինքնուրույն, առանց
ծնողների, տատիկ-պապիկների, ուսուցիչների օգնության:

Երբ որ ամբողջ ճանապարհը միասին անցնեք, դու
նորից այս հարցերին կպատասխանես և կպարզես, թէ
թանգարան այցելությունը ինչ նոր գիտելիք տվեց քեզ:



- * մանկական գրող
- * հեքիաթագիր
- * մեծերի գրող
- * հայրենասեր, քաջ մարդ
- * խաղերի հեղինակ
- * մեծ ընտանիքի հայրիկ
- * ուրախ, ընկերասեր մարդ
- * բոլոր երեխաների համար մտահոգ մարդ
- * ընթերցասեր
- * բարձրաճաշակ մարդ
- * տաղանդաշատ թարգմանիչ
- * գրքերի և գեղեցիկ իրերի խանութների հաճախորդ

Դիմուկ



-Գնացինք առաջ: Մեր թանգարանը
երկիարկանի է: Առաջին հարկում կա 4
սրահ: Այստեղ մենք քեզ կպատմենք
Հովհաննեսի կյանքի ամենահետաքրքիր
դրվագները: Իսկ երկրորդ հարկում
կհայտնվենք նրա անձնական
գրադարանում և բնակարանում:

4 սրահ

II հարկում
կհայտնվենք





- Յովիաննեսը ծնվել է 1869թ. փետրվարի 19-ին:
Կարո՞ղ ես հաշվել, թե քեզսից քանի տարով է
մեծ: Իհարկե դա կարող ես անել քո համակարգչով,
iPad-ով,  կամ բջջային հեռախոսով,
բայց փորձիր հաշվել այսպես. կետերի փոխարեն
մատիտով գրիր քո ծննդյան տարեթիվը և կատարիր
հանման գործողություն:



- Ի՞նչ ստացվեց:





-Նրա ծննդավայրը Դսեղ գյուղն է: Այն գտնվում է Լոռիում, իսկ Լոռին՝ Հայաստանի հյուսիսում: Այն շատ գեղեցիկ է՝ բարձր լեռներ, խոր անդունդներ, պեսաբես ծաղիկներ... Անտառներում աճում է մորի, մոռ, համեղ հոն, անդունդների

Վրա ճախրում են վայրի թռչուններ, լեռների միջով հոսում է Դեբեղ գետը: Լոռիում պատմական շատ հուշարձաններ կան: Իսկ հիմա թանգարանում «գտիր» Դսեղ գյուղը և գրիր, թե այն ո՞նց է այստեղ «տեղավորվել» ու նաև՝ Էքսկուլսավայրը ինչ է պատմել քեզ գյուղի այս հատվածի մասին:






-Յովհաննեսը Ծնվել է փետրվարի 19-ին՝ մի ցուրտ ձմեռային օր։ Ծնվել է տան տաքուկ անկյունում՝ թոնրի մոտ։
Ի՞նչ գիտես թոնրի մասին։





-Այս գեղեցիկ ճերմակ մորուսով մարդը
Յովհաննեսի հայրն է: Նա քահանա էր՝ Տեր
Թաղևոսը: Սա էլ մայրն է՝ Սուսան: Մայրիկը
իր տղային մեծացրել է բնության մեջ, գեղեցիկ
ծաղիկների գոկում, գուլալ աղբյուրների մոտ:



Ի Տ Տաշկուրյուն անց է Կապու¹
Տի ասպիաթային շոայլուրյուն,
Տեղ:

Հետէ Քամազուր



- Յովհաննեսին կոչել են իր մեծ հայրիկի անունով: Դու հավանաբար գիտես, որ «Յովհաննես» Սրբի անուն է, և հունվարի 14-ը Յայ Առաքելական Եկեղեցում անվանակոչության օր է: Այսպես որ, Եթե քո անունը Յովհաննես է, Յովհիկ կամ Օւնիկ, որ նույն անունն է, հունվարի 14-ին կարող ես գնալ Եկեղեցի և օրինություն ստանալ:

Եթե քո բնակավայրում
Եկեղեցի՝ լավ,

կա այս անունով
Եթե ոչ՝ գնա
Առաքելական
որսէ Եկեղեցի:

Հունվար

14


Օճիկ

Հովհաննես

Հունիկ



-Հովհաննեսի մեծ հայրը եղել է քաջ զորական:
Նրա նկարը չի պահպանվել, բայց դու կարող ես
երևակայությամբ նրան նկարել այս շրջանակի
մեջ: Քաջությունը և դիպուկ կրակել կարողանալը մեծ
պապից փոխանցվել է թոռնիկին: Այս պապիկի շնորհիվ
Էր, որ Դսեղի բնակիչներն առաջին անգամ համտեսեցին
կաղամբ ու կարտոֆիլ և տները լուսավորեցին
նավթավառով:





Յովհաննեսի սիրած վայրը իր գյուղում՝

Դսեղում, Դիղն էր: Դիղը մի բլուր
Է, բայց փոքրիկ տղայի համար այն մի հսկա սար
Էր թվում: Նա բարձրանում էր բլուի գլուխը և երազում՝
Նայելով աստղերին:

Նա երևակայում էր, թե ճախրում է օդում:





- Յիմա որպես զաղտնիք մենք կպատմենք մի քանի
արկած չարաճնի Յովիկի մանկությունից:

Փոքրիկ Յովիաննեսը քայլել սկսել է շատ շուտ:

Մի անգամ նա պատերից բռնվելով աննկատ տանից
դուրս է եկել քակ, և Ծաղիկ անունով կովիկը նրան հարու
է տվել, այսինքն՝ պոզիկներով իարվածել է:

Դե, Յովիաննեսը մի քիչ տըզտըզացել է:



- Մի անգամ, գյուղից հեռու՝ անտառում

Յովիաննեսը առաջին անգամ

նապաստակ է տեսել և «Վայ, գազան է»

գոռալով, փախել է:



- Մի անգամ էլ գայլը մտել է տուն:

Տղայի մայրիկին թվացել է, թէ
իշուկ է: Ու նրանք չեն

վախեցել:





-Իսկ մի անգամ Էլ Յովհաննեսը
ծիտիկի բնի մեջ է նայել, մեկ էլ ձվից
դուրս եկած փոքրիկ ձագուկները դեղին
կտուցները լայն բաց են արել և վզիկները
երկարել դեպի նա:
Ոնց է սարսափել խեղճ երեխան:



-Մի անգամ չարաճի
Յովհաննեսը քուրքը թարս
հագած, մտել է տուն,
և տնեցիներին մի
լավ վախեցրել:





Փոքր իասակում նա շատ լավ
կոճի* էր խաղում:



Իսկ ընկերներով սիրում էին
հարամոլլա՝ տապկնոցի** խաղալ:



*Վեզ, ճան՝ խաղ մանրիկ ոսկորներով

**պահմտոցի*



-Փոքրիկ Յովհաննեսը գրեթե ամեն օր
գյուղի մեծերից և իր ազգականներից լսել է
հետաքրքիր պատմություններ, զրոյցներ,
հեքիաթներ, ավանդություններ հին-հին
ժամանակների մասին:

Գյուղում Նեսն անունով մի տղա է լիսում:
Նա շատ հեքիաթներ է խմանում: Ամռան լուսնյակ
գիշերներին գյուղի երեխաները

հավաքվում են Յովհաննեսի տան դիմաց,
որպեսզի իրենց հեքիաթասաց ընկերոջից լսեն
հուրի փերիների, լուս ու մութ աշխարհի,

Զմրուխտ Շուշի

և այլ հեքիաթային բաների մասին:







-Հովհաննեսին գրել-կարդալ է սովորեցրել
հորեղբայրը Գրիգորը:

Տանը և զյուղում նրան կոչում էին
Գրիշկա բիծա:

Հետո Դսեղն ունեցավ ուսուցիչ՝ Սահակ
Վարժապետը:



Գրիշկա Բիծա



Նա շատ խիստ էր և
կոպիտ:
Երեխաները
նրան չեին
սիրում:






-Ուսումը շարունակելու համար նա գալիս է Զալալօղի, այժմ այս քաղաքը կոչվում է Ստեփանավան: Տասը տարեկան էր: Դպրոցի տեսուչը Տիգրան Տեր Դավթյանն էր: Նա ուներ մեծ գրադարան: Հովհաննեսը շատ էր օգտվում պայոն Տեր Դավթյանի գրադարանից և անվերջ կարդում:



-Նաև սիրահարվում է տեսուչի աղջկան՝ Վերգինեին և նրան է նվիրում իր առաջին բանաստեղծությունը: Թանգարանում գտիր այս մասին պատմող պահարանը և արտագրիր բանաստեղծությունը:





-Մտածում էր ուսումը շարունակել Վենետիկի Սուլրադ-Ռափայելյան վարժարանում: Բայց երազանքը չի իրականանում: **Ի՞նչ գիտես Վենետիկի և հայկական այս վարժարանի մասին:**




-Յովիաննեսի հայրն ուզում էր, որ իր տղան գիտության կոթություն ստանա:

Բայց 14 տարեկանում Թիֆլիս է գնում ուսումը շարունակելու: **Ինչպես է այն հիմա անվանվում և ո՞ր երկրի մայրաքաղաքն է:**



-Այն ժամանակ ձիռվ Դսեղից Թիֆլիս կարելի էր հասնել 3 օրում: Իսկ հիմա այդ նույն ճանապարհը ավտոմեքենայով կարելի է կտրել-անցնել մոտ 3 ժամում: **Քանի՞ ժամով է կրծատվել ճանապարհը:**




 -Այս քաղաքից առաջին տպավորությունը Յովհաննեսը Ներկայացրել է այսպես. «Ինձ թվաց, թե ընկա մի հսկայական հարսանքատուն... Զուգված, զարդարված շրիկում ու գրնզում էր ամբողջ քաղաքը»:

Թիֆլիսում շատ հայեր էին ապրում: Այն հայ մշակույթի և կրթության ամենամեծ կենտրոններից մեկն էր: Այս քաղաքում են ապրել, աշխատել և ստեղծագործել շատ հայ գոռղներ, նկարիչներ, ճարտարապետներ, դերասաններ, բժիշկներ, փաստաբաններ: Եթե լինես Թիֆլիսում, ապա ամեն քայլափոխի կտեսնես հայ ճարտարապետների, գործարարների հիմնած շենքերն ու հաստատությունները: Այստեղ հայկական Յավաբար թաղամասից վերև՝ Էլիա թաղում է գտնվում նաև Յայոց մեծերի պանթեոնը:

Թումանյանի շիրմաքարը ևս այստեղ է:

*Ո՞ւմ անունով է կոչվում Երևանում
գտնվող Յայոց մեծերի
պանթեոնը:*





-Պատանի Թումանյանը
ընդունվում է Թիֆլիսի
Ներսիսյան դպրոցը:

Այս դպրոցը հիմնել
է կաթողիկոս Ներսես
Աշտարակեցին և դրա
համար էլ այն կոչվում է Նրա
անունով:

Աշակերտ Թումանյանը
հատկապես կլանված լսում էր պատմության ուսուցիչ
Ծերենցի դասերը:

Նա պատմում էր հայ ազատագրական պայքարի,
քաջ, հայրենասեր արքաների և զորականների մասին և
ոզնորում երեխաներին:



-Ի՞նչ է Ծերենցի իսկական
անուն-ազգանունը
և ո՞վ է նա:





-Մինչ այս պատմությունները լսելը
Յովիաննեսն արդեն ծանոթ էր Խաչատուր
Աբովյանի «Վերք Յայաստանի» վեպին և շատ էր
տպավորված այս ստեղծագործության էջերում
պատմվող խիզախ «տղաներով», որոնց շարքում
նաև իր ապուպապերն էին:



Խ. Աբովյան



-4-րդ դասարանը
չափարտած
Յովհաննեսը թողնում է
դպրոցը:

Պատճառները.


* Նա ընթերցանությամբ
ավելի շատ գիտելիք
էր ստանում:

* Նրան դուր չէր գալիս դպրոցի
խիստ կարգուկանոնը:

* Չնայած նյութական
ինտիրներին,
դպրոցում նա
չէր կարողացել
օգտվել անվճար
կացարանից
և սննդից:



Դպրոցից դուրս
գալուց հետո Յովհաններ
սկսում է պարտաճակա-
ցորեն հաճախել
գրադարան-
ընթերցարան՝
զարգացնելու
իր միտքը և
գիտելիք
ստանալու:





-Պատանեկության տարիներից Յովհաննեսը
տարվում է անգլիացի մեծ գրող Վիլյամ
Շեքսպիրով և թատրոնով: Եվ դրա
«մեղավորը» պոլսահայ հրչակավոր դերասան
Պետրոս Աղամյանն էր:



Վ.Շեքսպիր



Պ. Շեքսպիր



-Թումանյանը այսքան էր զմայլված
Աղամյանի խաղով և առեղծվածային
թատրոնով, որ որոշում է «դերասան»
դառնալ Աղամյանի հետ ծանոթանալու համար:



-Ծուտով նա աշխատանքի է անցնում պարու
Սալամբեգյանի խանութում որպես խանութպանի
օգնական:

Յովհաննեսի պարտականությունն էր
հաճախորդների առջև դուռ բացել, վերակուն պահել:
Ի՞նչ էք կարծում նա որքան աշխատեց այս խանութում:



-Ընդամենը կես օր:





-Թիֆլիսում պատասի Յովհաննեսի
ընկերները հայրենասեր և քաջ տղաներ
էին:

Նրանք գաղտնի հավաքներ էին
կազմակերպում և մտածում էին հայոց
դպրոցների, եկեղեցիների, լեզվի փրկության
ճանապարհների մասին:



-Նրանք ծրագրում էին նաև Արևմտյան
Հայաստանի ազատագրության
հարցը:

Այս տղաները
ոգեշնչվում էին
Շաֆֆու պատմավեպերով,
հատկապես «Կայծեր»-ով:



Դաֆֆի



- Հենց այս ժամանակ էլ Յովիաննեսը վաճառում է իր վերարկուն և մի ատրճանակ գնում՝ մեր պատմական հայրենիքը ազատագրելու համար:

Բայց Արևմտյան Յայաստան մեկնող խիզախ ընկերներին չի կարողանում միանալ, քանի որ շատ ծանր և երկարատև հիվանդանում է:





-1886-ին նա գրում է «Շունն ու Կատուն»:
Բանն այս է, որ նման մի պատմություն
նա լսել էր փոքր ժամանակ իր մորեղբորից,
և հենց այդ ժողովրդական պատմությունն էլ
17 -ամյա Յովիաննեսը վերածեց մի հոյակապ
ստեղծագործության:



-Այստեղ գրիո,
թե ինչո՞ւ
թշնամացան շունն
ու կատուն:



-Իսկ դու գիտե՞ս, որ Յովհաննեսը որպես տիրացու սպասավորել է հայ առաքելական Եկեղեցում:
Եվ չնայած դա շատ կարճ է տևել, բայց նա հասցրել է մի քանի զավեշտական պատմությունների մեջ ընկնել:

Օրինակ՝ մի անգամ պատարագի ժամանակ,
պատարագիչ քահանան Ավետարանը ձեռքին շրջվել
է և պատահաբար հարվածել տիրացու Յովհաննեսի
քթին, և քթից արյունը եկել: Կամ թաղման ծեսի
շփոթել է հարսանեկանի հետ:

Իսկ քահանա
հետևյալ
նախապատմությունն
ունի:

Դառնալու որոշումը





- Հովհաննեսը որպես գրագիր աշխատել է Թիֆլիսի Հայոց հոգևոր առաջնորդարանի գրասենյակում: Այս աշխատանքի շնորհիվ ծանոթացել է Մարիամ Մաճկայան անուն-ազգանունով (տանը նրան Օլգա էին կանչում) մի սիրունիկ աղջկա հետ:

Հովհաննեսի՝ օրիորդ Մարիամին տված առաջին նվերը մի զույգ նորաձև կոշիկ էր, ինո՞ւ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը և «Հյուսիսափայլի»* համարները: Հետո նրանք ամուսնացան:



Մարիամին որդեգրած հայրը, փեսայի առջև քահանա դառնալու պայման է դնում:

Հովհաննեսն էլ համաձայնում է և ամուսնական պայմանագիր կնքում: Եվ իրոք մտնում է եկեղեցի և լինում է այս, ինչ արդեն պատմեցինք:

*Գրական-գեղարվեստական ամսագիր, որը լույս է տեսել Սոսկվայում 1858-1864 թթ.: Խմբագիր՝ Ստեփանոս Նազարյանց






-Բայց քանի որ պոետ էր հոգով և շատ տաղանդով, Յովհաննեսը շուտով թողնում է քահանայությունը և ամբողջովին զբաղվում գրականությամբ և ազգային գործերով:

Նրան քաջալերում էին արդեն շատ հայտնի գրողներ՝ Ղազարոս Աղայանը և Պերճ Պռոշյանը:

Չնայած տարիքային մեծ տարբերությանը՝ նրանք դառնում են հրաշալի ընկերներ:



-Ի՞նչ գիտես նրանց մասին:





-1890թ. Մոսկվայում
լրաց է տեսնում
Յովհաննես Թումանյանի
բանաստեղծությունների առաջին
ժողովածուն, իսկ երկու տարի անց՝
երկրորդը...



-Թումանյանը շատ ջերմ
հարաբերություններ է ունեցել
Ամենայն Հայոց կաթողիկոս
Մկրտիչ Խրիմյանի հետ: Ժողովուրդը այսքան
շատ է սիրել իր վեհափառ

հայրապետին

(կաթողիկոսներին այսպես
են կոչում), ով հայրիկի պես
հոգատար էր ամբողջ հայ
ժողովուրդի հանդեպ, որ կոչել է
Նրան Խրիմյան Յայրիկ:





-1895-96թթ. մեր պատմական մեծ
հայրենիքում տեղի էին ուսենում շատ դաժան
իրադարձություններ և Արևմտյան Հայաստանից (Վան,
Մուշ, Սասուն, Բայազետ, Ալաշկերտ, Կարին, Կարս և
այլ բնակավայրերից) շատ գաղթականներ, որքուններ՝
մահից փրկվելով, հասնում էին Արևելյան Հայաստան:

Թումանյանը գալիս է Սուլբ Էջմիածին
հանդիպելու Խրիմյան Հայրիկին և օգնելու իր
հայրենակիցներին այդ ծանր օրերին: Այս մասին
պատմող պահարանում դու կնկատես մի լուսանկար՝
Խրիմյան կաթողիկոսը Դսեղում՝ ճերմակ ձիու վրա:

Այս սիրուն նժույգը,
որի անունը Խանլու է՝
Թումանյանի եղբոր՝
Շոստոմինն է: Իսկ
լուսանկարիչը կարող եք
երևակայել ո՞վ է:

-Նույն ինքը՝ Հովհ.

Թումանյանը:





-Կարելի է ասել լուսանկարչությունը Յովի.

Թումանյանի հոբբին էր: Թանգարանում
պահպան է 200-ից ավելի լուսանկար՝ առված իր
կողմից:

Նա շատ է սիրել լուսանկարել իր
բալիկներին, սիրելի տիկնոջը:

Մոտ 15 լուսանկար էլ նա արել է հազար ու
մեկ եկեղեցիների
մայրաքաղաք Անիում:



-Ի՞նչ գիտես Անի
մայրաքաղաքի մասին:






-Եթե շարունակես շրջել թանգարանում,
կիանդիակես Գիքորի պատմությանը:

Դու հավանաբար կարդացել կամ լսել
ես այն: Իսկ գիտես, որ պատմության հերոսը մի
հրական տղա էր:

Նրա անունը Ստեփան
էր, և նա Յովիաննես
Թումանյանի ազգականն
էր:

Իսկ «Գիքորը»
պատմվածքը պիեսի է
վերածել Թումանյանի
որդին՝ Արտավագոր
և առաջին անգամ
բեմադրել Ռուդ
գյուղում:






-Հիմա ճիշտ ժամանակն է պատմելու Յովի.

Թումանյանի ընկերների մասին: Եթե
ուզում ես պատկերացում կազմել, թե ինչ ազնվագարմ,

մտավորական մարդիկ են եղել Նրա շրջապատում,
անգամ ինչ հագուկապ է ընդունված եղել այն

ժամանակ, ապա նկարիչ Գևորգ Բաշինջառյանի
արվեստանոցում և գրող Լեոնի հոբեյանի առիթով՝ այգուա
արված լուսանկարները կօգնեն քեզ դա հասկանալ:

Այստեղ են Ավ. Իսահակյանը, Կոմիտասը, Ղազարոս
Աղայանը, Վրթանես Փափազյանը, Արշակ Չոպանյանը...



Կոմիտաս, Ղ. Աղայան, վ. Փափազյան, Ա. Չոպանյան

*Փոքրիկ տղան մի վարդ տեսավ,
Տեսավ մի վարդ դաշտի միջին...*



-Քեզ ծանո՞թ է այս գեղեցիկ բանաստեղծությունը:
Սա գերմանացի մեծ գրող Գյորեի
ստեղծագործությունն է, որ հրաշալիորեն թարգմանել
է Հովի. Թումանյանը: Իսկ կոմպոզիտոր Ռոմանոս
Մելիքյանը մի բացարիկ ռոմանս* է գրել «Վարդ»
բանաստեղծության համար:

Եթե ճանաչում ես նոտաները, ապա փորձիր նվագել
և երգել այս: Իմիջիայլոց գերմանացի կոմպոզիտորներ
Ֆրանց Շնուբերտը և Հայնրիխ Վերները ևս երաժշտություն
են գրել Գյորեի այս բանաստեղծության համար:

Փորձիր գտնել ողակց
ձայնագրությունները և խոստովանիր, թե քեզ որևէ է ավելի
շատ դուր գալիս:

* քսարական երգ






-Թումանյանի մտերիմների շարքում է
նաև դերասան Կարապետ Գալֆայանը:
Թումանյանը նրան շատ էր քաջալերում:
Դերասանը հատկապես մեծ ճանաչում գտավ
Փարիզի բեմերում:

Յիշիր Նրա անունը, քանի որ քիչ անց կլսես
մի տարօրինակ պատմություն

Գալֆայանի,
Թումանյանի և
Վերջինիս
մուճակների*
մասին:



Դ. Գալֆայան

* Հողաթափ





-իսկ իիմա շարունակենք ծանոթանալ Յովի.
Թումանյանի մեկենաս* ընկերներին՝
Իշխանուհի Մարիամ, Ֆիլիպ Վարդազարյան,
Արիստակես Զարգարյան...

Նրանք ոչ միայն հարուստ էին ֆինանսապես,
այլև շատ մեծ սիրտ և ազնիվ հոգի ունեին:
Նրանք իրենց պարտքն էին համարում աշակցել
Թումանյանին՝ իրատարակել են նրա գրքերը,
հոգացել բուժման ծախսերը, օգնել մեծ ընտանիքին՝
մեծացնելու տասը երեխաներին, որպեսզի
Թումանյանը ամբողջովով նվիրվի գրականությանը
և ազգային հարցերին:



Օրինակ՝
Իշխանուհի



Մարիամի նախաձեռնությամբ 1902-ին «Մանկական
գրադարան» մատենաշարով իրատարակվել են
Թումանյանի մանկական ստեղծագործությունները:

Դրանք նկարազարդել են հանրահայտ նկարիչ
Գարեգին Երիցյանը և ինսիփ Ռոտտերը:

*Արվեստի և գիտության գործիչներին հովանավորող մեծահարուստներ:



-1901թ. աշխանը Թումանյանը եղել է փշատերև անտառներով շրջապատված Աբասթուման առողջավայրում: Այն գտնվում է Վրաստանի հայաբնակ Ախալցխա քաղաքի մոտ: Այստեղ Թումանյանը ոչ միայն ապաքինվել է թոքերի հիվանդությունից, այլև մի լավ ստեղծագործել: Այստեղ են ծնվել Նրա գլուխգործոցները՝ «Փարվանան», «Թմկաբերդի առումը», «Սասունցի Դավիթը» ևն: Նաև վերջնականապես խմբագրվել են «Լոռեցի Սաքոն», «Անուշը» և այլ գործեր:



-Դու վստահաբար լսել ես
մեր էպոսի քաջ հերոս
Սասունցի Դավիթի մասին:
Ի՞նչ գիտես Դավիթի զենք ու
զրահի մասին: Ի՞նչ է Նրա ձիու
անունը:





-Իմիջիայլոց «Ասուշի» մասին: Թումանյանի այս գեղեցիկ պոեմի հիման վրա կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը գրել է հայոց ազգային առաջին օպերան: Այն 1912թ. բեմադրվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): Առաջին դերակատարները եղել են Աստղիկ Մարիկյանը, Շարա Տայանը: Հետագայում՝ Հայկանուշ Դանիելյանը, Գոհար Գասպարյանը, Ավագ Պետրոսյանը...


Առաջին ազդագրերը, լուսանկարները պահպում են մեր թանգարանում:



-Բայց դեռ Արմեն Տիգրանյանից էլ առաջ Կոմիտաս վարդապետն է խանդավառվել «Ասուշը» պոեմով և որոշել օպերա գրել: Սակայն Հայաստանի և հայության հետ պատահած ծանր դեպքերը խանգարել են գործին, և այս անկատար է մնացել, իսկ ձեռագրերի մեծ մասն էլ կորել է:

 -Այնպես է ստացվել, որ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը Հովհ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» իրաշալի պոեմը «Ալմաստ» վերևագրով օպերա է դարձրել: Դա 1916 թվականն էր: Եվ այս ներկայացմամբ էլ 1933 թ.-ին բացվել է հանճարեղ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի կառուցած երևանի Օպերայի և բալետի թատրոնի շենքը: Հիմա կարծում եմ հասկանալի է, թե ինչու են երևանի Ազատության հրապարակում կանգնեցված Հովհ. Թումանյանի և Ալ. Սպենդիարյանի արձանները:

Լավ կլինի,
որ պրատես
և այստեղ նշես
քանդակագործ-
ների անունները:






-Մենք արդեն պատմել ենք, որ Յովի. Թումանյանը
մեծ հայրենասեր էր և ազգային գործիչ: Քանի-
քանի ազգամիջյան ընդհարումներ է նա կանխել իր
խաղաղասիրությամբ և քաջությամբ: Նա զինված
խմբերով հասել է հայ-թաթարական կողմների վայր և
նախ՝ սպիտակ դրոշ պարզելով, թշնամուն առաջարկել
խաղաղություն, այլապես սպառնացել է ջախջախել նրան:



-Նա երբեք թշնամու առջև չի ստորացել և վախեցել: Իր
հայրենասիրության և խիզախության համար ռուսական
իշխանությունները մի քանի անգամ նրան ձերբակալել
են և բանտարկել Թիֆլիսի Մետեխի բանտում:

Բայց իր հրաշալի
ընկերների՝
մասնավորաբար
Ֆիլիա
Վարդազարյանի
Վճարած գրավով,
Թումանյանը
դուրս է եկել
բանտից մինչև
դատավարությունը:





-Բայց իր ծննդյան 40-ամյակին նա բանտում էր:
Եվ այստեղ, ծխախոտի բարակ թղթի վրա, գրում
է «Վայրէջք» բաևաստեղծությունը և քեզ լավ ծանոթ «Մի

կաթիլ մեղրը»: Յիշո՞ւմ ես ինչից սկսվեց տուրուղմիոցը:
Ձեռագրերը բաևտախցում պահելը շատ էր վտանգավոր,
բայց նաև չեր թույլատրվում բանտից որևէ բան դուրս հանել,
ուստի Թումանյանը մի շատ խելացի միջոց է գտնում:

Երբ մի օր իր փոքրիկ աղջիկը՝ երկու տարեկան թամարը,
մայրիկի հետ գալիս է հայրիկին տեսակցության,

Թումանյանը իր ձեռագրերը խնամքով թաքցնում է թամարի
սիրունիկ զգեստի մեջ և այդպես փոքրիկ բալիկի շնորհիկ այս
երկու ստեղծագործությունները փրկվում են և հասնում մեզ:

Պատկերացնո՞ւմ ես,
Եթե հանկարծ
իմանար այդ մասին
ձեռագրերը:



ինչ վատ բան կլիներ,
բաևտապետը
և առգրավեր



- Ես չեմ ուզում
անզամ մտածել
այդ մասին:



- Լավ, Թումանյանը Մետեխից գրավով դուրս
եկավ, բայց ի՞նչ եղավ հետո:



-1912թ. Սանկտ Պետերբուրգում նշանակված
էր նրա դատավարությունը:
Բայց քանի որ նա անմեղ էր և ոչ մի հանցանք
չէր գործել, արդարացվեց:



Եվ Պետերբուրգի հայերը մի հոյակապ խնջույք
կազմակերպեցին Դանոն ռեստորանում՝ ի պատիվ
Թումանյանի:



-Յիմա ճիշտ ժամանակն է պատմելու Վերնատան
մասին: Վերնատունը Թումանյանի նախավերջին
բնակարանի սենյակներից մեկն է, որտեղ ամեն
հինգշաբթի հավաքվում էին հայ մտավորականները,
ընսարկում արվեստի և ազգային հարցեր:

Վերնատան հասցեն Բեհբության փողոց 50,
(այժմ՝ Ասարիանի 44): Եթե լինես Թիֆլիսում,

փորձիր գտնել այդ շենքը: Թումանյանի
հարկաբաժինը վերջին՝ 5-րդ
հարկում է: Եվ հասնելու համար
հարկավոր է բարձրանալ
101 աստիճան:

1, 2, 3, 4, 5...

21, 22, 23...

50, 51, 52...

60, 61, 62, 63...

Դազարոս Աղայանը և
Պերճ Պռոշյանը ամեն
անգամ բարձրանալիս՝
փորձում

100, 101, 102
էին հաշվել
աստիճանները, բայց
ամեն անգամ տարբեր
103 թիվ էին ստանում
100, 101, 102...





-Վերևատունն ուներ իր մշտական անդամները՝ Ավ. Իսահակյան, Դերենիկ Դեմիրճյան, Նիկոլ Աղբայյան, Լևոն Շանթ, Ղ. Աղայան և իհարկե՛ Հովհ. Թումանյան։ Նրանց կոչում էին Վերևականներ, իսկ Վերևատան հավաքներին մասնակցող կանաց՝ Վերևանույշներ։ Գեղեցիկ է չե՛ ինչում՝ Վերևանույշներ։ Տան տերը նրանց հրամցնում էր Վերևահատիկ։ Դա իր սիրած լեբլեբին* էր։ Ուրեմն՝ Վերևատուն, Վերևական, Վերևանույշ, Վերևահատիկ... Իմիջիայլոց Վերևականները ունեին նաև կեղծանուններ, օրինակ՝ Թումանյանի կեղծանունը Շեքսպիր էր։ Կարծում եմ հասկացար՝ ինչո՞ւ։



-Ասում են Երբեմն-Երբեմն թանգարանի այս հատվածում հայտնվում է մի զարմանալի տեսիլք-ոգի։

Շատերը
պնդում են,
իբր այս
սենյակում
հանդիպում
են
Թումանյանին։



* Բոված սիսեր՝ հնարավոր է աղով և պղպեղով



-Թումանյանը շատ էր սիրում Սայաթ-Նովայի
Երգերը: Եվ 1914թ. սկզբին մի հրաշալի միտք
ծագեց նրա գլխում:



Թիֆլիսի Սուրբ Գևորգ հայկական եկեղեցու
բակում մահարձան կառուցել աշուղ* Սայաթ-Նովայի
հիշատակին:



-Եվ մեծ նկարից Գևորգ Բաշինջառյանը մի գեղեցիկ
տարբերակ առաջարկեց:

Բացի այդ, մայիսի վերջին կիրակի օրը հոչակվեց
Վարդատոն՝ նվիրված Սայաթ-Նովային: Այդ օրը մարդիկ
վարդերով այցելում էին Թիֆլիսի Սուրբ Գևորգ եկեղեցի՝
Սայաթ-Նովայի հուշաքարին, արտասանում և երգում:

Այս ավանդույթը պահպանված է նաև այսօր:



*Գուսան





-Հիմա ես կպատմեմ քաջ գիևվոր,
հրամանատար Անդրանիկ Օզանյանի
մասին: Նա մեծ քաջագործություններ է
արել մեր Հայրենիքի համար:



-Օրինակ՝ թշնամուց ազատել է Տարոնը,
Վասպուրականը, Սասունը՝ Սասունցի Դավթի, Մեծ
և Փոքր Մհերների ծննդավայրը:



-Զորավար Անդրանիկը և Յովի. Թումանյանը
հավատարիմ ընկերներ էին: Նրանք շատ
հայրենասեր մարդիկ էին: Եվ երբ մեր
Հայրենիքը վտանգի մեջ էր հայտնվում, նրանք անմիջապես
հասնում էին օգնության:

Այդպես եղավ և 1915

թվականին: Պետք է ասեմ, որ
Թումանյանի չորս տղաներից
երեքը նույնպես մեկնեցին
ռազմաճակատ՝ պաշտպանելու
վտանգի մեջ հայտնված իրենց
հայրենակիցներին: Իսկ 4-րդ
տղան պարզապես դեռ փոքր էր
պատերազմ զնալու համար, դրա համար Էլ նա մնաց տանը:



 -Ամեն տարի ապրիլի 24-ին աշխարհի որ անկյունում էլ լինենք, մենք այցելում ենք ցեղասպանության զոհերին Նվիրված հուշարձան: Երևանում դա Ծիծեռնակաբերդի բարձունքում է: Երևի չկա մի հայ, որի նախնիների կյանքի խաղաղ պատմությունը տակնուվիր եղած չկանությունների 1915-1921թթ. թուրքական իշխանությունների կողմից մեր հայրենիքում կատարված դաժանությունների պատճառով:

 -Երբ մի քիչ էլ մեծանաս, ավելի շատ բան կիմանաս այդ մասին: Յիմա միայն կասեմ, որ այդ ժամանակ Յայաստանը շատ մեծ էր, բայց թշնամին գրավեց մեծ մասը, սպանեց հայ բնակչությանը և շատ-շատերը ստիպված էին հեռանալ իրենց ծննդավայրից: Յետաքրքրվիր մեծ ծնողներից (տատիկներից և պապիկներից), թե որտեղից են քո նախնիները:

Փնտրիր նրանց ծննդավայրերը
քարտզների վրա և փորձիր տեղեկություններ
հավաքել:






-Մեր մեծ Հայաստանի բնությունը շատ գեղեցիկ էր՝ հարուստ լեռներով ու ձորերով, հորդառատ գետերով և մարգագետիններով, հրաշագեղ ծաղիկներով:

Թումանյանը ուղղակի ապշած էր այդ գեղեցկությամբ: Նա պատմում էր հսկա հակինքների և հիրիկների մասին, որ տեսել էր մեր գյուղերում ու դաշտերում:

Փորձիր նկարել
դրանք:





-Մեր սիրելի Թումանյանը Վանից Եկավ Սուլբ
Էջմիածին, հիմնեց որբանց և հիվանդանց
իունց գյուղերից ու քաղաքներից մի կերպ
փախած հիվանդ, քաղցած բալիկների համար:

Թումանյանին անշուշտ շատերն են օգնել,
ովքեր կամավոր* կերպով հավաքվել էին նրա շուրջ
երեխաներին սովից, հիվանդություններից և տխուր
տրամադրությունից փրկելու համար:

Իմիջիայլոց նրա դուստրերից Նվարդը ևս օգնում
էր իր հայրիկին այդ քարեսիրական գործում:



*Սեփական ցանկությամբ, անշահախնդիր և անձնվիրաբար:



-Իրենց ծննդավայրը կողցրած երեխաները
այսքան շատ էին սիրում Թումանյանին,
որ անունը դրեցին
Ամենայն Յայց որբերի հայրիկ:

Ամենայն Յայց Կարողիկուն



-Այդ օրերին հանուն երեխաների Թումանյանն
անգամ մի փոքր վեճ ունեցավ Ամենայն Յայց
կաթողիկոսի հետ: Կաթողիկոսը չէր թույլատրում
որբուկներին պատսպարվել իր նստավայրում՝
Նորակառուց Վեհարանում: Թումանյանին դա շատ
բարկացրեց: Կաթողիկոսն էլ իր հերթին բարկացավ
և կշտամբեց Թումանյանին, թե իբր ինչպես ես
հակադրվում Ամենայն Յայց Կաթողիկոսին:
Թումանյանը նրան ասաց, Դուք Ամենայն Յայց
Կաթողիկոսն եք, ես էլ **Ամենայն Յայց բանաստեղծն**
եմ: Այս խոսքերից հետո Գևորգ 5-րդ վեհափառ
թույլատրեց որբուկներին և մյուս գաղթականներին
պատսպարվել Վեհարանում:

Ամենայն Յայց բանաստեղծն



- Ճիշտն ասած, Թումանյանը սիրում էր, երբ
երեխաները չարաճնիություն էին անում: Նա
ասում էր, որ երեխան, եթե առողջ է, պետք է աշխույժ լինի,
շարժուն... Ճիշտ է, երբեմն մեծահասակները հոգնում և
ջղայնանում են երեխաների աղմուկից, բայց մոռանում
են, որ իրենք ել մի ժամանակ փոքրիկ են եղել և նույն
չարություններն են արել:

Իսկ Թումանյանը դա շատ լավ հասկանում էր:



- Իսչե՞ր ասես, որ չի արել Թումանյանը
երեխաների համար:



- Վստահ եմ քեզ ծանոթ են նրա մանկական
ստեղծագործությունները՝
բանաստեղծությունները, հեքիաթներն ու
պատմվածքները:






- Ես շատ եմ սիրում «Փիսոն» բանաստեղծությունը:

Փիսոն, փիսոն մլավան,
Թավոհիգ թողեց, փախավ Վան,
Լեզուն թաթխան, երկար պոչ,
Ինչ որ ուզեց, ասին՝ ոչ:
-Փիսոն գևաց գողեգող,
Փորը դատարկ, սիրտը դող,
Դունչը մեկնեց կովկիթին,
Ճերեկին իշավ ճակատին:



-Դու էլ կարող ես քո սիրած բանաստեղծությունը
գրել այստեղ:







- Իսկ դու գիտե՞ս, որ Թումանյանը նաև
դասագրքերի հեղինակ է:



-Նա իր ընկերներ Լևոն Շանթի և Ստեփան
Լիսիցյանի հետ՝ փոքրիկ դպրոցականների համար
կազմել է ԼՈՒՍԱԲԵՐ դասագիրքը:



-Այդ ժամանակ մանուկների և պատանիների
համար հրատարակվում էր ՀԱՍԿԵՐ-ը: Դա
մի շատ հետաքրքիր ամսագիր էր: Թումանյանը իր
մանկական ստեղծագործությունները տպագրում էր
ՀԱՍԿԵՐ-ում:



-Բայց ամենաանսպասելին այն է, որ Թումանյանը նաև մտավոր խաղեր է ստեղծել Երեխաների և մեծահասակների համար: Դրանք այնքան հետաքրքիր և ուրախ խաղեր են:



-Դրանք խաղալով, մեկ էլ հասկանում ես, թե որքան է խելքի շատացել, ինչքան բան գիտես:

-Առանց տնային աշխատանք կատարելո՞ւ:



-Այո, միայն ընկերներիդ կամ ընտանիքիդ անդամների հետ խաղալով: Օրինակ՝ «Հայկական առածների լոտո», «Սրամիտ հովհանք», «Թանկագին քարեր», «Աստղերի խաղ», «Հայկական հանելուկներ», «Հայոց գետերը» սեղանի հնտելեկտուալ խաղերը:



-Մեր թանգարանում դու ոչ միայն կտեսնես սրանից մոտ 100 տարի առաջ ստեղծված այդ խաղերը, այլև կարող ես ձեռք բերել դրանց վերատպությունները:





-Խաղա՞նք հիմա: Ես կհուշեմ առածի սկիզբը, իսկ դու փորձիր շարունակել.
«Ինքն իրեն գովող...»



...կընկնի աղբի կողովը»:



-Ճիշտ է, ապրես:



-Իսկ հիմա ես քեզ մի հանելով ասեմ, դու գուշակիր պատասխանը.



Ես ի՞նչն է, ինչ,
ինքը հողի մեջ,
Սիրութը շողի մեջ:



-Ըստ~.... գազարը:



-Ճիշտ է: իսկ եթե ուզում ես խաղի միջոցով գիտելիք ստանալ պատմական Հայաստանի գետերի, դրանց վտակների և այն մասին, թե որ ծովն են թափվում, ապա թումանյանի «Հայոց գետերը» հայրենագիտական խաղը ճիշտ քեզ համար է:





-Ամեն ինչ իր ժամանակն ունի, խաղացինք, հիմա
ժամանակն է շարունակելու մեր ճամփորդությունը
«մուսաների բնակավայրով»:



-Կամ թանգարանով: Օ, ինչ լուրջ դեմքեր են մեզ
նայում աջ կողմի պահարաններից:



-Նրանք այս հոչակավոր գրողներն են, որոնց
ստեղծագործությունները թարգմանել է Հովհաննես Շահումյանը:
Մուսաները: Այստեղ են Գրիմ եղբայրները, Հայսրիին
Հայնեն, Բայրոնը, Լոնգֆելոոն, Պուշկինը, Լերմոնտովը,
Շիլերը, Գյորեն և ուրիշները:





-Ես որքան գիտեմ Թումանյանը ակնոց չի կրել,
այդ դեպքում այս պեսսնեն* ո՞ւմ է:



-Իրենն է, սրանից բացի մեկն էլ ունի: Ես
զարմանում եմ, ինչպես ընդամենը մեկ քիթը կարող
է պահել ակնոցը:



-Ինչո՞ւ ես զարմանում, կա նաև ակնոցի մի
տեսակ, որ կոչվում է լորսետ, որն ուղղակի
դրվում է աչքին և **պենանե** չի ընկնում:

Լորսետ



*քթակնոց



-Օ՛, ինչ մեծ կոշիկներ են: Ուս որ հսկայի լինեն,-
կմտածես դու՝ք կոշիկի չափսի հետ համեմատելով:



-Ճովի. Թումանյանի մուճակներն* են, ամերիկյան
արտադրության: Սրանք շատ տարօրինակ
մուճակներ են: Ճիշում ես
քիչ առաջ խնդրեցինք, որ
մտապահես դերասան Կարապետ
Գալֆայանի անունը, քանի որ նրա հետ
կապված հետաքրքիր պատմություն



այսի պատմեինք:
Ահա և պատմում ենք.

-Կարապետ Գալֆայանը հաճախ էր
այս մուճակները* խնդրում
Թումանյանից Համետի դերը թատրոնում
կատարելու համար:



-Իսկ խալաթը, բաճկոնները,
ժիլետները, թիթեռնիկներն
ինչ գեղեցիկ են:



-Ճիշում ես թիթեռնիկների մասին
ի՞նչ մանկական
բանաստեղծություն
ունի Թումանյանը:

*հողաթափ



-Այդ բանաստեղությունը թիթեռնիկի մասին չէ, այլ փաթիլիկի:



-Գրիր այստեղ այդ բանաստեղությունը և անզիր սովորիր, այն շատ գեղեցիկ է:



-Հուսով եմ դու գեղեցիկ ձեռագիր ունես, ոչ այնպիսին, ինչպիսին ուներ Թումանյանի Արտավազդ որդին: Նա այնքան անընթեռնելի էր գրում իր նամակները, որ հայրիկը չէր կարողանում կարդալ: Ստիպված խնդրում էր նրան նորից գրել:

Յաջորդ պահարանում դու կտեսնես Արտիկի՝ այդպես էին մտերիմները նրան կոչում, ձեռագիրը:




-Միայն կարդացվում է Միրելի Յայրիկ և Վան բառերը:



-Այս նամակը գրված է Վանից, որտեղ 1915թ. ծառայում էր Արտավազդը՝ օգնելով մարդկանց այդ ծանր օրերին: Նա շատ տաղանդավոր երիտասարդ էր, նկարիչ էր և արվեստաբան: Ցավոք պատերազմից նա չվերադարձավ և Թումանյանների ընտանիքը շատ-շատ տիրեց:

Ամենայն հայոց բանաստեղծ և որբերի հայրիկ

Յովի. Թումանյանը
հիվանդացավ և
տարիների ընթացքում
հալվեց մոմի պես ու...





-Յիմա բարձրանանք Երկրորդ հարկ և
հյուրընկալվենք Թումանյանի բնակարանում: Ճիշտն
ասած՝ նա այստեղ չի ապրել, այլ Թիֆլիսում, դու
դա արդեն գիտես: Բայց երբ Երևանում, ի պատիվ նրա,
կառուցվեց այս շքեղ շենքը, որոշվեց նաև նույնությամբ
վերստեղծել նրա թիֆլիսյան վերջին բնակարանը:




-Նրա կահույքը և ամբողջ ունեցվածքը բեռնատար
մեքենաներով տեղափոխվեց Երևան և ստեղծվեց
թանգարանը: Մինչ այդ բնակարանը մտնելը՝ դու
կարող ես տեսնել այն տները, որտեղ երբևէ ապրել է
Թումանյանը
կրկին Թիֆլիս քաղաքում:



Իմիջիայլոց այս տների մեծ մասը դեռ կանգուն է:



-Հիմա մինչև բնակարան մտնելը
ուսումնասիրենք Թումանյանի անձնական
գրադարանը: Թումանյանը Թիֆլիսի ԳԻՐ և ԳՈՒՏԵՆԲԵՐԳ*
գրախանութեների մշտական հաճախորդն է եղել:
Իրականում ունեցել է 10.000-ից ավելի գիրք, բայց մեզ
է հասել 8150-ը: Դրանք խնամքով պահպում են այստեղ:
Ժամանակին այս գրադարանն իր մեծությամբ համարվել է
աշխարհում երրորդը: Գրքերը ամենատարբեր թեմաներով
են՝ կենդանիների և բույսերի
մասին, հեքիաթների գրքեր,
Ավետարաններ,
Հայաստանի մասին պատմող գրքեր, բժշկական գրքեր,
տարբեր ժողովուրդների սովորույթների մասին պատմող
գրքեն
և այլն:



* Գրատպության հիմնադիրն է



-Իսկ Թումանյանի անձնական գրադարանի
ամենահին գիրքը տպագրվել է 1660թ.
Վենետիկում: Դա Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի»
գիրքն է:

Թումանյանը շատ խնամքով է պահել իր գրքերը,
խիստ քարկացել է, երբ իրենից գիրք են խնդրել և
չեն վերադարձրել: Այդ պատճառով էլ իր
աշխատասելյակում մի գրություն է փակցրել պատին,
երբ մտնենք այստեղ կկարդանք:



-Նաև իր գեղեցիկ
գրապահարանների
ապակիները քողարկել է
գեղեցիկ պատկերներով
կամ քարտեզներով,
որ հյուրերը ներսում
դասավորված գրքերը
չտեսնեն:





-Հիմա Էլ ուսումնասիրենք Թումանյանի
գրապիտույքը և մտնենք նրա
բնակարանը՝ զմուռսներ, գույնզգույն մատիտներ,
մելաններ*, դրոշմանիշեր...

Թումանյանը շատ է սիրել իր ձեռքով
նոթատետրեր պատրաստել:



* թանաք



-Ահա և բնակարանը:
Այստեղ մտնելիս
պետք է շշուկով
խոսել, քանի որ մենք՝
թանգարանի մուսաներս,
հիմնականում այստեղ ենք
ապրում: Տեսեք ինչ գեղեցիկ
է այս վարդագույն սենյակը իր
բույսարիով:



-Գիտե՞ս,
տանը առդեն
հեռախոս կար:

Ավեսու այս չի պահպանվել:

Բայց մենք գիտենք
համարը՝ **17-20**:


-Այն,
բարև Ձեզ,

17-20 -նն է:

Պարոն Թումանյանին
կարելի՞ է խնդրել:





-իսկ այս սենյակում թումանյանի
տասը երեխաների նկարներն են և
նրանց պատկանող փոքրիկ իրերը:

Պատկերացնո՞ւմ եք, ինչ ուրախ և աղմկոտ տուն
է եղել սա: Տասը երեխա՝ գումարած ընկերասեր
պոետ և հոգատար մայրիկ:



 -Այս շքեղ սեղանի
շուրջ ընտանիքը
հավաքվել է ճաշի:

 -Ոչ միայն
ընտանիքը, այլև
հյուրերը, որ անպակաս են
եղել: Չէ՞ որ Թումանյանը
շատ էր հյուրընկալ և նրա
բնակարանի դուռը միշտ բաց էր, սեղանը՝ լիքը:



 -Իր հյուրասիրության և
ընկերասիրության համար Նրան
կոչել են Ամենայն Յայոց թամադա:

-Այսինքն՝ կենաց ասող: Զեր տանը ո՞վ է լավ
կենաց ասում: Դու էլ կարող ես

Ամենայն Յայոց թամադա

Այս բաժակով խօսում եմ...

հյուրթով բաժակ բարձրացնել,
կենաց ասել և չիւկացնել բաժակդ մյուսներին.

Պոզ լինենք...





-Հաջորդը Թումանյանների հյուրասենյակն
Է՝ շատ ճաշակով կահավորված:

Մեծ ռոյալը հայրիկը գնել է իր աղջկա՝ Անուշի
համար: Պատերին փակցված են Գ. Բաշինջաղյանի
«Զմեռը Մանգիսում» և «Անձրևից հետո»
կտավները: Յիշո՞ւմ ես այս նկարչի անունը ինչ
առիթով ենք հիշատակել նախորդ Էջերում:





-Յիմա մտնենք ամենախորհրդավոր՝
Նախշազարդ առաստաղով և պատերով
աշխատասենյակը: Այստեղ մի առեղծվածային
մթնոլորտ կա: Զգո՞ւմ ես: Յայցքով ուշադիր զննիր
գրասեղանը: Ինչե՞ր կան վրան:



-Այստեղ արևելյան և Եվրոպական ոճի
գեղեցիկ իրեր շատ կան: Դրանք այնքան
ճաշակով են ընտրված, որ զարմանալ կարելի
է: Պատկերացնո՞ւմ ես, պատի վառարանի մեջ
փայտերը ինչպես են ճտճտացել և տաքացրել ամբողջ
բևակարանը:




-Տե՛ս, որքան շատ
արձանիկներ ունի
Թումանյանը: Յարցրու
Էքսկուրսավարին, թե
որանցից որն է եղել
Յովհաննես Թումանյանի
թոռնիկի՝ փոքրիկ Վիգենի
սիրելի
խաղալիք-
արձանիկը
և փորձիր
նկարել
այստեղ:





-Աշխատասենյակի ներսի դունից երևում է
մեկ ուրիշ սենյակ:

Դա մի համեստ ննջարան է: Այստեղ է
«բազմել» Թումանյանի տիկնոջ Զինգեր կարի
մեքենան: Գիտե՞ս քանի-քանի
գեղեցիկ զգեստներ է կարել տիկին
Օլգան իր բալիկների համար:





-Մեզ մնաց պատշգամբը տեսնել: Էլ սնդուկներ ու ճամպրուկներ, Էլ խոհանոցային դանակների հավաքածու, Էլ արդուկ ու ինքնաեռ, Էլ մեծ ու փոքր կաթսաներ, Էլ ճոճաթոռ ու թախտ...



...Էլ ունաբ... սա Թումանյանի սիրած պտուղն է: Այն շատ համեղ է և օգտակար: Ունի մեծ կորիզներ, այնպես որ, Եթե ուտելու լինես զգովշ եղիր, կուլ չտա:





-Ես մեկ սենյակ և դու կավարտես պտույտդ
թանգարանում: Դա Թումանյանի տիկնոջ
և աղջիկների սենյակն է: Տիկին Օլգան ապրել
է 100 տարի: Իսկ Թումանյանի դուստրերից
Աշխենը և Թամարը եղել են մեր թանգարանի
առաջին տևորենները՝ 1953 թվականից:

100 տարեկան



Օլգա



Աշխեն



Թամար



-Թանգարանում աչքովդ մեծ վարագույրներ
պետք է ընկած լինեին:

Դրանք տարօրինակ վարագույրներ են: Նախ
նվազում են, հետո էլ իրենց ետևում թաքցնում մի
հսկայական ձոր: Դրանք բացվում են միայն այն
դեպքում, երբ լսում են հրաշագործ խոսքեր...

Այնպես որ, առանց թանգարանի աշխատակիցների
հանկարծ չծիկրակես վարագույրից ներս, թե չե...





-Յիմա արդեն, երբ դու շատ բան գիտես
Մուսաների այս բնակավայրի մասին,
խնդրում եմ նորից աչքի անցկացրու և նշիր
այն կետերը, որոնք ճիշտ են համարում, նաև
համեմատիր նախորդ նշումներիդ հետ:

Դու կտեսնես, թէ որքան շատ բան են
սովորել Մուսակնի



...և Մուսանեի շնորհիվ:

- * մանկական գրող
- * հեքիաթագիր
- * մեծերի գրող
- * հայրենասեր քաջ մարդ
- * խաղերի հեղինակ
- * մեծ ընտանիքի հայրիկ
- * ուրախ, ընկերասեր մարդ
- * բոլոր երեխաների համար մտահոգ մարդ
- * ընթերցասեր
- * բարձրաճաշակ մարդ
- * տաղանդաշատ թարգմանիչ
- * գրքերի և գեղեցիկ իրերի խանութների հաճախորդ



-Իմիշիայլոց թանգարանից մուտք կա դեպի
Մութ ու Լուս աշխարհ և Ստվերների թագավորություն:



-Ճիշտն ասած՝ դա մի քիչ զաղտնի աշխարհ է, և
մենք փակագծեր բացել չենք կարող:
Բայց եթե կուզես, մենք քեզ կուղեկցենք այստեղ:

Ահա և վերջ, քեզ մաղթում ենք հանգիստ
վայրէջք 54 աստիճաններով և հաճելի օր:

54 ասրիեան

Յ.Գ. Դու արդեն գիտե՞ս, ինչ են խորիրդանշում 54
աստիճանները:



ԶԵՐՄՈՐԵՆ՝ Մուսանե և Մուսակն

Հովհ. Թումանյանի թանգարանի մանկական հրատարակությունները

- * Հ. Թումանյանի թանգարանի գրքույկ-ուղեցույց, 2008
- * Այ փոքրիկներ, այ սիրուններ, 2010
- * Ընտանեկան ալբոմ, 2010
- * Պէս և կոտ, 2014
- * Կառլա մեծա, 2014

«ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՍԱՆԿԱԿԱՆ ԳՐՔԵՐ» Ենթամատենաշար

- * Սիրիլ ֆոն Օլֆերսի «Զյունեղեն երազը», 2013
- * «Ութը հեքեաթներ», 2013

ՍԱՐԳԱՐԻՏՆԵՐ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՍԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ

- * «Հենգելն ու Գրետելը», «Կարմրիկը» (մեկ գրքով), 2013

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԿԱԶՄԱԾ ԽԱՂԵՐԸ

- * «Հայկական առածների լուսն»
- * «Հայոց գետերը»
- * «Սրամիտ հովհիվը»
- * «Հանելուկների խաղ»
- * «Թանկագին քարերը»
- * «Դդում»

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ

Զվարճալի զզզը՝ զբոսանք

(խմբագրված վերահրատարակություն)

ԵՐԵՒԱՆ
2018

 ՀՀ, 0002, Երեւան, Մոսկովյան 40
 +37410 56 00 21
 museum@toumanian.am
 www.toumanianmuseum.am
 Hovhanness Toumanian Museum
 toumanian_museum